

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3**

ք. Երևան

« 20 » *հուլիս* 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ինտերեվրոս-Արգոս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 450 օրացուցային օրը:

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 3):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողություն պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհետարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ « օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 615 012 000 (վեց հարյուր տասնհինգ միլիոն տասներկու հազար) ՀՀ դրամ, որից 102 502 000 (մեկ հարյուր երկու միլիոն հինգ հարյուր երկու հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով* նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.5 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը

5.5.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

5.5.2 Կապալառուն կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների և ժամկետների վերաբերյալ հիմնավորումներ: Հատկացվող կանխավճարի մարման ժամկետները պետք է համապատասխանեն պայմանագրով սահմանված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետներին:

5.5.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

5.5.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է առնվազն 90 աշխատանքային օրով ավելի լինի Կապալառուի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետից:

5.5.5 Կապալառուի կողմից ներկայացվող բանկային երաշխիքում պարտադիր պետք է նշված լինի Պատվիրատուի՝ կանխավճարի շրջանակներում Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների

* Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ժամկետների խախտման դեպքում տրամադրված կանխավճարի չմարված մասի հետգանձման իրավունքը:

5.5.6 Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (450 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Հաջորդող տարիների աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի

ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Կ 900011023745
ՀՎՀՀ 02565827

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

<<Ինտերեյրոս-Արգոս>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան Թումանյան 3/10
<<Հայթիզնեսթանկ>> ՓԲԸ Կիկյան մ/6
Հ/Հ 1150013831790100
ՀՎՀՀ 02245698

Գլխավոր քարտուրսը

Տնօրեն՝


(ստորագրություն) **Լ. Վ. Վանյան**
Կ.Տ.




(ստորագրություն) **Գ. Նանյան**






ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Տավուշի մարզի գ. Կիրանցի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
1.1 Համաշինարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	III-րդ կարգի գրունտի մշակում փոստրակում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	930	700	650994.1586
2	Նույնը, բարձելով ավտոմեքենաների վրա	խմ	1220	450	548995.0738
3	III-րդ կարգի գրունտի մշակում խրամուղիներում 0.5 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	խմ	835	800	667994.006
4	Փոստրակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	70	1000	69999.37189
5	Գրունտի ետլիցք բուլդոզերով հատակների տակ	խմ	1670	500	834992.5075
6	Գրունտի տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	1670	400	667994.006
7	Գրունտի ետլիցք ձեռքով, տոփանումով	խմ	165	1500	247497.7792
8	Ավելորդ գրունտի տեղափոխում	խմ	1220	500	609994.5265
Ընդամենը հողային աշխատանքներ					4,298,461.4
Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր					
9	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B - 7,5 դասի բետոնով	խմ	35.9	30000	1076990.336
10	Խամբարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B - 7,5 դասի	խմ	213	35000	7454933.106
11	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	293.35	59999	17600842.07
12	Ամրան Փ8A240C	տն	7.279	339997	2474803.793
13	Ամրան Փ16A500C	տն	5.698	339997	1937166.618
14	Ամրան Փ18A500C	տն	4.482	339997	1523798.327
15	Ամրան Փ28A500C	տն	0.127	339997	43247.61194
16	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	35.5	33000	1171489.488



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
17	Խամբարաբեռոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	8	35000	279997.4876
18	Բետոնե աստիճանների պատրաստում -3,3 սիշում B-7,5 դասի բետոնով	խմ	1.1	55000	60499.45713
19	Նույնի, բետոնե հիմնատակի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	3.5	45000	157498.5868
20	Նույնի, 300մմ հաստ միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.7	40000	27999.74876
21	Արտաքին պատերի երկշերտ ջրամեկուսացում բիտումի մածիկով	քմ	107	1000	106999.0399
22	Ներքին պատերի միաշերտ ջրամեկուսացում բիտումի մածիկով	քմ	175	1000	174998.4297
23	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	7.4	64999	480995.684
24	Ամրան Փ8A240C	տն	0.510	339997	173398.4441
25	Ամրան Փ22A500C	տն	1.742	339997	592274.6855
26	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.232	349997	81234.27108
27	Միաձույլ ե/բետոնե պարզունակների B-20 դասի բետոնով	խմ	16.0	64999	1039990.668
28	Ամրան Փ 8A240	տն	0.361	339997	122874.8974
29	Ամրան Փ12A500C	տն	0.304	339997	103427.0719
30	Ամրան Փ18A500C	տն	0.486	339997	165238.5173
31	Ամրան Փ28A500C	տն	0.130	339997	44199.60339
32	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.007	339997	2481.977729
33	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով	խմ	198.05	64999	12873134.49
34	Ամրան Փ6, 8A240C	տն	1.795	339997	610124.5253
35	Ամրան Փ10A500C	տն	1.923	339997	653882.1327
36	Ամրան Փ12A500C	տն	12.233	339997	4159012.681
37	Ամրան Փ16A500C	տն	0.483	339997	164116.5274
38	Ամրան Փ18A500C	տն	0.064	339997	21759.80475
39	Ամրան Փ22A500C	տն	1.833	339997	623214.4078
40	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.243	339997	82449.26018
41	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	0.47	69999	32899.70479
42	Ամրան Փ6A240	տն	0.016	339997	5439.951187
43	Ամրան Փ12A500C	տն	0.065	339997	22099.8017




20.08.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի


Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափան միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
44	Ամրան Փ16A500C	տն	0.015	339997	5099.954238
45	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում 0,00 նիշի վրա B-20 դասի բետոնով	խմ	52.7	64999	3425469.263
46	Ամրան Փ6A240	տն	0.095	339997	32299.71017
47	Ամրան Փ12A500C	տն	1.886	339997	641234.2462
48	Ամրան Փ14, 18A500C	տն	3.691	339997	1254894.74
49	Միաձույլ ե/բ հեծանի պատրաստում B-20 դասի բետոնով ՄՀ-2	խմ	1.0	69999	69999.37189
50	Ամրան Փ8A240	տն	0.028	339997	9519.914577
51	Ամրան Փ18A500C	տն	0.063	339997	21419.8078
52	ԱՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում -2,85 դեպի 0,00 նիշ B-20 դասի բետոնով	խմ	1.9	69999	132998.8066
53	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.5	40000	19999.82054
54	Ամրան Փ8A240	տն	0.053	339997	17951.83892
55	Ամրան Փ16A500C	տն	0.274	339997	93159.16408
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				61,869,559.8
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				
56	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	59.5	69999	4164962.627
57	Ամրան Փ8A240C	տն	2.341	359997	842748.8379
58	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.050	359997	18107.83752
59	Ամրան Փ22A500C	տն	6.940	359997	2498341.582
60	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0.01	449996	4679.958006
61	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0.5	69999	34999.68595
62	Ամրան Փ8A240C	տն	0.023	359997	8423.924411
63	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0.051	359997	18431.83461
64	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	10.2	69999	713993.5933
65	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	123.42	69999	8639322.479
66	Ամրան Փ6, 8A240	տն	3.220	359997	1159351.597
67	Ամրան Փ8A500C	տն	0.643	359997	231369.9239
68	Ամրան Փ12A500C	տն	1.797	359997	646971.7947
69	Ամրան Փ16A500C	տն	1.497	359997	538735.1659
70	Ամրան Փ18A500C	տն	4.019	359997	1446863.017

20.07.2021թ. կնքված N ՀՀԲԿ-ԲՄԱՇԶԲ-20/9-3 պայմանագրի


Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
71	Ամրան Φ25A500C	տն	0.092	359997	33191.70217
72	Ամրան Φ28A500C	տն	0.744	359997	267801.597
73	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.190	449996	85499.23281
74	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	23.14	69999	1619785.466
75	Ամրան Φ6, 8A240	տն	0.534	359997	192382.2737
76	Ամրան Φ12A500C	տն	1.357	359997	488371.6178
77	Ամրան Φ18A500C	տն	0.149	359997	53567.51933
78	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	149.4	27000	4033547.807
79	Նույնի բետոնացում, B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	95.53	59999	5731748.569
80	Ամրան Φ6, 8A240C	տն	0.724	359997	260734.8604
81	Ամրան Φ10A500C	տն	8.657	359997	3116636.034
82	Ամրան Φ12A500C	տն	7.041	359997	2534593.257
83	Ամրան Φ16A500C	տն	1.002	359997	360572.7646
84	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.63	69999	114098.9762
85	Ամրան Φ6A240	տն	0.051	359997	18359.83526
86	Ամրան Φ12A500C	տն	0.221	359997	79559.28611
87	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20 դասի բետոնով	խմ	186.5	69999	13054882.86
88	Ամրան Φ6,8A240	տն	0.363	359997	130498.829
89	Ամրան Φ12A500C	տն	16.051	359997	5778416.15
90	Ամրան Φ14A500C	տն	5.701	359997	2052449.583
91	Ամրան Φ18A500C	տն	0.026	359997	9215.917305
92	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով ՄՀ-1	խմ	6.80	69999	475995.7289
93	Ամրան Φ8A240	տն	0.184	359997	66095.40692
94	Ամրան Φ18A500C	տն	0.367	359997	132190.8138
95	Միաձույլ ե/բ հովհարի պատրաստում +2,7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՄ-1, +հեծան ՄՀ-1)	խմ	1.7	69999	118998.9322
96	Ամրան Φ8A240	տն	0.029	359997	10331.90729
97	Ամրան Φ8A500C	տն	0.073	359997	26207.76484

 20.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇԶԲ-20/9-3 պայմանագրի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
98	Ամրան Փ12A500C	տն	0.008	359997	2879.974158
99	Ամրան Փ16A500C	տն	0.046	359997	16559.85141
100	Ամրան Փ18A500C	տն	0.015	359997	5399.951546
101	Բետոնե աստիճանների պատրաստում 0,00 նիշից դեպի +0,45նիշ B-7,5 դասի բետոնով	խմ	2.3	45000	103499.0713
102	ՄՄ-1 Աստիճանի միաձուլվ ե/բետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0,45նիշից դեպի +3,3նիշ)	խմ	1.9	69999	132998.8066
103	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	0.5	35000	17499.84297
104	Ամրան Փ8A240	տն	0.055	359997	19799.82233
105	Ամրան Փ16A500C	տն	0.274	359997	98639.1149
Ընդամենը Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր					62,210,315.0
Միջնորմներ					
106	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	486.0	3300	1603719.61
107	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	128.2	25000	3205221.239
108	Ամրան Փ8A500C	տն	3.268	329997	1078510.182
Ընդամենը միջնորմներ					5,887,451.0
Դռներ և պատուհաններ					
109	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաքին դռներ	քմ	36.31	94999	3449191.05
110	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժների բացվող մաս(դռոտ)	քմ	1.92	94999	182398.3633
111	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1.20	89999	107999.0309
112	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17.04	55000	937191.5905
113	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դռոտ)	քմ	2.30	40000	92159.17305
114	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ. ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25.0	30000	750893.2622
115	Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-1	հատ	10	50000	499995.5135
116	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-2----Դ-3	հատ	43	50000	2149980.708
117	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎՔ Դ-4----Դ-4*	հատ	4	50000	199998.2054

 20.04.2021թ. կնքված N ՀՀԲԿ-ԲՄԱՇԶԲ-20/9-3 պայմանագրի


Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
118	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռների տեղադրում Դ-5, Դ-5"	քմ	3.5	40000	139822.7454
119	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	7	2000	13999.87438
120	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5.3	40000	210110.1147
121	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	13.6	30000	407396.3444
122	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	89.3	37000	3304440.349
123	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64.2	30000	1925142.726
124	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	80.1	3500	280207.4857
	Ընդամենը դռներ և պատուհաններ				14,650,926.5
	Հատակներ				
125	Հողի տոփանում խճաքարով	քմ	1480	800	1183989.376
126	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	222.0	40000	8879920.32
127	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8,3կգ/քմ)	տն	12.3	339997	4176522.524
128	Խարամաբետոն 45մմ հաստ. B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1903.1	1800	3425459.263
129	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրա	քմ	1706.3	1800	3071258.441
130	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	540.46	1800	972819.2708
131	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ.	քմ	1362.59	1800	2452639.992
132	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	417.12	10000	4171162.572
133	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	33.42	12000	401036.4015
134	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	33.42	2500	83549.25031
135	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	գծմ	184.12	2000	368236.6958
136	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ.) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	160.32	9000	1442867.053
137	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	գծմ	80.1	1500	120133.922
138	Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	1012.2996	12000	12147486.2
139	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎՔ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	257.4352	12000	3089194.68
140	Կավրոլինից (4,5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116.8	4000	467195.8078
141	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ. (շրիշակների պատրաստումով)	քմ	34.32	2500	85799.23012
	Ընդամենը հատակներ				46,539,271.0
	Տանիք				

 20.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամերը
1	2	3	4	5	6
142	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3.681	829993	3055036.587
143	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0.181	829993	150142.3328
144	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6.616	829993	5491230.727
145	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0.196	829993	162489.302
146	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	16.043	829993	13315570.52
147	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1.137	829993	943289.8558
148	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	27.853	40000	1114108.883
149	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1182.7	1800	2128872.617
150	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած)	խմ	30.9	199998	6179944.547
151	Նույնի երեսում (տակից) ՕՍՊ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1540.1	5000	7700430.903
152	Գոլորշամեկուսիչ շերտի փռում	քմ	1540.1	1500	2310129.271
153	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամաքակե սալերով	քմ	1540.1	3000	4620258.542
154	ՕՍՊ սալերի տեղադրում 10մմ հաստ. (բիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	1781.1	5000	8905420.091
155	Բիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մողիֆիկացված բիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	1781.1	7000	12467588.13
156	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	30.9	18000	556195.0092
157	ՕՍՊ սալի մասնակի լաքապատում	քմ	297.2	1300	386382.533
158	Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ. ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով	գծմ	136.5	5000	682493.8759
159	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	15	5000	74999.32703
160	Ջրհոս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	76.18	4000	304717.2657
161	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0.707	749993	530245.2421
162	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	50000	35349.6828
	Ընդամենը տանիք				71,114,895.2
	Հարդարման աշխատանքներ				
163	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2484.24	2300	5713700.731

20.07.2021թ. կնքված N ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
164	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	765.31	2300	1760197.206
165	Դռների եւ պատուհանների շեղերի սվաղ գաջի շաղախով	քմ	10.13	3500	35461.6818
166	V-2, V-4, V-5 Վիտրամենների վերնի մասի լցափակում գիպսոկարտոնե հարթասալերով	քմ	12.9	5000	64499.42124
167	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	891.67	2300	2050822.598
168	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	379.62	2300	873118.1654
169	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2516.2	1900	4780721.902
170	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	765.31	1900	1454075.952
171	Առաստաղների բարձրորակ ներկում լատեկսային ներկով	քմ	1316.39	1900	2501118.557
172	Առաստաղների բարելավված ներկում լատեկսային ներկով	քմ	314.09	1900	596765.6452
173	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	435.35	2500	1088365.234
174	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	356.6	10000	3565968.002
175	Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9,5մմ հաստության, ստատների տեղադրումով	քմ	424.72	5000	2123580.945
176	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզ	332	1500	497995.5314
177	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	65.53	7000	458705.884
178	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0.593	849992	503936.6781
179	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.593	50000	29643.33401
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				28,098,677.5
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
180	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ	խմ	16	5000	79999.28216
181	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	16	40000	639994.2573
182	Բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	9.2	40000	367996.6979
183	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով	քմ	12.17	16000	194718.2528
184	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով	քմ	49.57	13000	644404.2177
185	Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ	խմ	9.1	8000	72799.34677
186	Նույնի, միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	2.7	45000	121498.9098
187	Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	3.4	45000	152998.6271
188	Նույնի, միաձույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստության B-12,5 դասի բետոնով	խմ	1.4	79999	111998.995
189	Ամրան Փ10A500C	տն	0.135	399996	53999.51546
190	60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնաձող	տն	0.104	849992	88399.20679
191	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.104	50000	5199.95334
	Ընդամենը արտաքին աստիճաններ և թեքահարթակներ				2,534,007.3
	Արտաքին հարդարում				

 20 . 0X.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇԶԲ-20/9-3 պայմանագրի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
192	Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ.) բազալտե մանրաթելային սայերով	քմ	1379.7	5000	6898438.1
193	V-4, V-5 արտաքին վիտրամենների վերևի մասի երեսապատում այլումինե "Alukobond" թիթեղով	քմ	3.5	35000	122498.9008
194	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով	քմ	1278.76	3500	4475619.84
195	Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով	քմ	1278.76	2000	2557497.051
196	Պատերի երեսապատում բազալտե սայերով 30մմ հաստ. խարսխումով	քմ	102.5	16000	1639985.284
197	Պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալերից 30մմ հաստ.	քմ	11.72	16000	187438.3181
198	Բացվածքների լցափակում ապակեբլոկներով	քմ	0.96	59999	57599.48316
199	Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար	քմ ուղ. ստորին	523	1300	679893.8993
	Ընդամենը արտաքին հարդարում				16,618,970.9
	ԸՆԴԱՍԵՆԸ 1.1 Համաշինարարական աշխատանքներ				313,822,535.7
	Ամբարձիչ				
